

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N° 135
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Ֆուտբոլ մարզախաղի տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցումը
Առարկա՝	Ֆիզկուլտուրա
Ուսուցիչ՝	<i>«Երևանի Խ. Աբելյանի անվան հ84 հիմնական դպրոց» պրակ Ղազարյան Մկրտիչ Վարդանի</i>
Վերապատրաստող՝	Սարգսյան Սամվել

Բովանդակություն

1. Ներածություն
2. Կրթական հիմնական խնդիրները
3. Կոնկրետ ուսուցման խնդիրները
4. Մեթոդների կիրառում
5. Չնահատում
6. Դասի կոնսպեկտ
7. Եզրակացություն

Ներածություն

Կրտսեր տարիքի երեխաների, պատանիների և երիտասարդների համակողմանի դաստիարակությունը եղել և լինելու է հասարակության ուշդրության կենտրոնում:

Այս գործընթացի և հատկապես դպրոցական տարիքի երեխաների շարժողական ընդունակությունների մշակման, բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման, աճող սերնդի առողջության ամրապնդման, դրական միջավայրի ստեղծման, հանրապետությունում ֆուտբոլ մարզաձևը զանգվածային դարձնելու և զարգացնելու նպատակով ՀՀ գիտության և կրթության, սպորտի, մշակույթի նախարարությունների և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի (ՀՖՖ) հետ համատեղ մշակվել է համալիր ծրագիր, որը միտված է այս մարզաձևի ներառմանը հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերում:

Ֆուտբոլը կոլեկտիվ խաղ է: Դաշտում հաջողության հասնելու համար անհրաժեշտ են խաղադաշտում գտնվող բոլոր 11 ֆուտբոլիստների համաձայնեցված գործողությունները: Վերջին տասնամյակում նկատվում է խաղի լարվածության աճ, որը դրսևորվում է խաղի տեմպի բարձրացումով, առանց գնդակի տեղաշարժերի թվի ավելացումով, ինչպես նաև տեխնիկական հնարքների կատարման արագության մեծացումով:

Ժամանակակից ֆուտբոլն արժետիկ խաղ է, որը խաղացողներից պահանջում է շարժողական մեծ պատրաստականություն և ֆունկցիոնալ մեծ կարողություններ: Ֆուտբոլում մարզիկի հիմնական աշխատանքը տեղաշարժերն են: Սակայն բազմաթիվ տեղաշարժերից բացի՝ խաղի ընթացքում ֆուտբոլիստները կատարում են զանազան տեխնիկատակտիկական գործողություններ: Խաղի ընթացքում բոլոր տեխնիկատակտիկական գործողությունների հաճախականությունը հետևյալ պատկերն ունի՝ գնդակի փոխանցումներ, գնդակի կասեցումներ, վարումներ, շրջանցումներ, հարվածներ դարպասին, վերջում՝ այլ գործողություններ: ԵՎ քանի որ ֆուտբոլը կոլեկտիվ խաղ է, բացի վերանշյալից արժի առանձին շեշտել խաղի տակտիկան, որը արտահայտվում է խաղացողների փոխըմբռնումով, գործողությունների ներդաշնակությամբ, խաղի ընթացքում ուժերը ճիշտ բաշխելու կարողությամբ և այլն:

Կրթական հիմնական խնդիրները

Ֆուտբոլի դասերի ընթացքում լուծվում են տարբեր խնդիրներ:

1. Դասերին առավելապես դրվում են օրգանիզմի կենսական հզորացման և շարժողական պաշարի հաղըստացման խնդիրներ:
2. Ընդհանուր և հատուկ ֆիզիկական (տեխնիկական և տակտիկական) պատրաստականություն և նոր հնարքների ու գործողությունների ուսուցման խնդիրները:
3. Մրցութային գործողությունների տիրապետման խնդիրներ:

Դասի խնդիրները լուծվում են նրռանցհամապատասխան վարժությունների, իրագործման մեթոդների ու մեթոդական հնարքների միջոցով: Դասի խնդիրների ճիշտ ընտրությունը յուրաքանչյուր դասի արդյունավետության գլխավոր պայմանն է:

Ուսումնական դասերի խնդիրները հիմնականում ձևակերպվում են «ՀՀուսուցանել»», «ՀՀդաստիարակել»», «ՀՀծանոթացնել»», «ՀՀյուրացնել»», «ՀՀամրապնդել»», «ՀՀկատարելագործել»» տերմիններով: Երբեմն վարժությունն ուսուցանվում է մասնատված: Այդ դեպքում խնդիրը կլինի առանձին մասերի ուսուցումը: Եթե օգտագործվում է «ՀՀուսուցանող ծրագիր»», ապա խնդիրը կլինի առանձին «ՀՀտարրերի»» ուսուցումը:

Կոնկրետ ուսուցման խնդիրները

Տեխնիկա¹ տերմինն առաջացել է հունարեն տեխնե » բառից, նշանակում է արվեստ, վարպետություն:

Ֆուտբոլում տեխնիկան հատուկ հնարքների այն համալիրն է, որը գործադրվում է խաղն արդյունավետ վարելու համար: Տեխնիկական հնարքը խաղային որոշ խնդիրներ լուծող շարժողական գործողություն է: Յուրաքանչյուր տեխնիկական հնարք կարող է կիրառվել խաղային տարբեր իրավիճակներում, որով էլ պայմանավորված է դրանցից յուրաքանչյուրի կատարման եղանակով:

Տեխնիկա հասկացությունից զատ սպորտում գոյություն ունենան տեխնիկական վարպետություն հասկացությունը: Ֆուտբոլում այն որոշում է մարզիկի տեխնիկական պատրաստության բարձր մակարդակը, որի չափանիշներն են հնարքների և դրանց գործադրման եղանակների բազմազանությունը, գործողությունների արդյունավետությունը խաղի տարբեր իրավիճակներում:

Յուրաքանչյուր տեխնիկական-հնարքում կարելի է առանձնացնել 3 փուլ՝ նախապատրաստական, հիմնական և եզրափակիչ: Դրանք տարբերվում են շարժումների առանձնահատկություններով և մասնավոր շարժողական խնդիրներով:

Պատանի ֆուտբոլիստների տեխնիկական պատրաստությունը բարդ և տևական գործընթաց է: Այն նախատեսում է որոշակի խնդիրներ, բովանդակություն և մեթոդներ, որոնք բազմամյա պատրաստության տարբեր փուլերում տարբեր են:

Սկզբնական պատրաստության փուլում ուսուցմն անհրաժեշտ է սկսել տեղաշարժերի տեխնիկայից՝ վազք, կանգառներ, շրջադարձեր և այլն: Դրան զուգահեռ՝ երեխաները յուրացնում են ֆուտբոլի տեխնիկայի հիմունքները:

Մասնագիտացման փուլում պատանի ֆուտբոլիստները ավելի մանրակրկիտ են սովորում և հետագայում ամրապնդում նախորդ փուլում յուրացրած տեխնիկական հնարքները: Չուզահեռաբար ծանոթանում են մյուս հնարքներին՝ պահպանելով դիդակտիկ սկզբունքը՝ պարզից բարդ:

¹ Սամսոն Սուրիկի Զակոբյան – ՖՈՒՏԲՈԼ ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2009

Սպորտային կատարելագործման փուլում տեխնիկական պատրաստականությունն ավելի է կատարելագործվում:

Տեխնիկական պատրաստականությունը ենթադրում է խաղի ընթացքում կիրառվող տեխնիկական հնարքների բազմազանություն՝ արդյունավետություն, կայունություն և հռևալիություն:

Ֆուտբոլ խաղի տեխնիկան բաժանվում է տարբեր խմբերի ու ենթախմբերի:

Մեթոդների կիրառում

Ֆուտբոլում ուսուցման և մարզման արդյունավետությունն Էապես պայմանավորված Է դրանց կիրառման մեթոդներով²՝ մարզամիջոցների օգտագործման եղանակներով, որոնց օգնությամբ ֆուտբոլիստները յուրացնում և կատարելագործում են խաղի տեխնիկան, մշակում իրենց շարժողական ընդունակությունները:

Ֆուտբոլիստների պատրաստության գործընթացում կիրառվում Է մեթոդների 3 խումբ՝ խոսքի, զննման և գործնական:

Խոսքի մեթոդներն են զրոյցը, բացատրությունը, դասախոսությունը, հրահանգը, կարգադրությունը, ցուցումը և վերլուծությունը:

Ձևնման մեթոդներն են վարժությունների անմիջական ցուցադրումը, նկարների, ուսումնական ֆիլմերի, տեսաֆիլմերի ցուցադրումը, մրցումների դիտումը և գործողությունների ցուցադրումը մակետի վրա:

Գործնական մեթոդները բաժանվում են 2 խմբի՝ -մեթոդներ, որոնք միտված են ֆուտբոլիստի տեխնիկայի և տակտիկայի տիրապետմանը և կատարելագործմանը.

Մեթոդներ, որոնց օգնությամբ մշակվում են տարբեր շարժողական ընդունակությունները:

Առաջին խմբին են դասվում ուսուցման ամբողջական և մասնատված մեթոդները:

Երկրորդ խմբին են դասվում մեթոդների 2 հիմնական խումբ՝ չընդհատվող և ինտերվալային: Այս մեթոդներից բացի՝ գոյություն ունեն դրանց տարատեսակները՝ հավասարաչափ, փոփոխական, կրկնողական, շրջանաձև, համակցված:

Որպես ինքնուրույն գործնական մեթոդներ առանձնացվում են նաև խաղային, մրցութային և համակցված ազդեցության մեթոդները:

Ուսումնական մեթոդների համակարգված ուսուցումը նպաստում Է դրանց կայուն ընկալմանը:

² ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2012թ. N68 – Ա/Ք հրաման-
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ <<ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ>> ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ
ԾՐԱԳԻՐ

ՖՈՒՏԲՈՒԼԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ֆուտբոլը կոլեկտիվ խաղ է: Մրցումներում հաջողությունը պայմանավորված է ոչ միայն ֆուտբոլիստների ֆիզիկական, տեխնիկական, հոգեբանական պատրաստության մակարդակով, այլև խաղացողների փոխըմբռնումով, գործողությունների ներդաշնակությամբ, խաղի ընթացքում ուժերը ճիշտ բաշխելու կարողությամբ և այլն: Այս ամենը հատկանշում է թիմի խաղի տակտիկան³, որը ներկայացված է տրված է գծապատկերում: Ֆուտբոլի տակտիկան անհատական, խմբային և թիմային գործողությունների համագործակցումն է հարձակման և պաշտպանության ընթացքում՝ խաշ դում վերջնական ճպատակի հասնելու հաճար: Տակտիկայի գերխնդիրն է որոշել ու կիրառել խաղն վարելու միջոցները և ձևերը կոնկրետ պայմաններում՝ կոնկրետ մրցակցի դեմ: Խաղի տակտիկայի ընտրությունը պայճաճավորված է մի շարք գործոններով. Որոնց թվում են սեփական թիմի կարողությունները, ժրգակգը խաղի հանդիպման Օշաճակությունը և այլն Խաղի տակտիկական միջոցներ եգ համարվում քոլոր տեխնիկական հճարքներց: Եգ տեխնիկական պատրաստությունն ուղղված է շարժումների կատարելագորի. Մաճը, ապա տակտիկական պատրաստությունը հնարավորություն է տալիս խաղում նպատակապաց կիրառել այդ հնարքները:

Անհատական գործողությունները առանձին խաղացողի գործողություններն են, որոնք ուղղված են խաղի որոշակի պահի որոշակի տակտիկական խնոր լոճմանը:

Խմբային գործողությունները երկու կամ ավելի խաղացողների այն փոր. Գործողություններ են, որոնք հարձակման կամ պաշ կո ծում են ոլտչակի խնդիրճեր:

Թիմային տակտիկական գործողությունները թիմի բոլոր խաղագողճեյի փոխգործողություններն են, որոնք ուղղված են թիմային ընդհանուր խճի լոճմանը: Թիմային գործողություններ իրակաճացվում են տակտիկական կոմակարգի միջոցով, այն է՝ դաշտում թիմի խաղացողների դասավորությունը, յուրաքանչյուրի որոշակի պարտավորությունները և գործողությունների շրջանակը:

Խաղի վարման եղանակը մրցակցի դեմ կիրառվող անհատական, խմբային և թիմային գործողությունների առանձնահատկությունն է:

³ ՀՀ ԿԳ նախարարություն, Հյաստանի ֆուտբոլի ֆեդերացիա- Հակոբյան Ս.Ս.- <<ՖՈՒՏԲՈՒԼ>> ծրագիր, ԵՐԵՎԱՆ 2009

Խաղաոճը թիմի խաղին բնորոշ առանձնահատկությունն է: Այն կարող է ճել հարձակողական, պաշտպանական, կոմբինացված (համակցված), աճետտական և այլն:

Խաղի վարման տեմպը որոշվում է խաղային գործողությունների կատարման արագությամբ: Պայմանավորված խաղի ընթացքով, խաղացողների էֆզեժմության և այլ հանճգամամբներով՝ խաղի տեմպը բարձրանում է կամ, հակառակն, իջնում:

Հասկանալի է, որ տակտիկայի միջոցով լուծվում են որոշակի մրցակցի իրավիճակի խաղի համար նախամշված խնդիրները: Մրցումները ֆուտբոլում հետևյալն են՝ առաջնության, գավաթի խաղեր, տարբեր մրցաշարեր: Երկարատև ճրցումներում վերջնական նպատակին հասնելու համար թիմը պետք է լիարժեք նախապատրաստվի և ճիշտ բաշխի իր ուժերը: Տնական մրցումների ընթացքում այդ խնդիրների լուծմանն օգնում է ռազմավարությունը (Ստրատեգիա) Տակտիկան ստրատեգիայի մասն է: Ռազմաբաշխումը մրցումների ընթացքում, բոլոր պայմանների լավագույն օգտագործումը վերջնական նպատակին հասնելու համար: Տակտիկան պայմանավորված է ֆուտբոլիստի տեխնիկական և ֆիզիկական պատրաստությամբ: Տեխնիկական հնարքների բազմազանությամբ, դրանց կատարյալ տիրապետումով է պայմանավորված տակտիկական գործողությունների քանակը ու արդյունավետությունը: Իսկ տակտիկական գործողությունների իրականացումը պայմանավորված է նաև ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստականության մակարդակով: Ֆուտբոլի տակտիկական գործողությունները բաժանվում են երկու խմբի՝ հարձակողական և պաշտպանական:

Գնահատում

Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատման հիմնական նպատակն է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման աստիճանի ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը՝ վումբրուսումնական որակի բացահայտումն ու վերահրսկումը: Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատման միջոցով պարզվում է յուրաքանչյուր սովորողի կողմից առարկայի չափորոշիչների և ծրագրերի պահանջների կատարման ընթացքը և ամբողջական պատկերը: Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, անհատականությունը, ինչպես նաև թե սովորողը բժշկական որ խմբում է ընդգրկված: Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատումը իրականացվում է ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով՝ 10 միավորային սանդղակով: Սովորողների ընթացիկ գնահատումը բաղկացած է երկու իրար լրացնող ձևերից՝

-Առաջադիմության միավորային գնահատում

-Ուսուցանող գնահատում:

Ֆիզիկական կուլտուրա առարկայի ընթացիկ արայունքների միավորային գնահատում կատարվում է հետեյալ ստուգման տեսակներով՝

1. Բանավոր հարցում,
2. Գործնական աշխատանք:

Գետհատման խնդիրներն են՝

Գնահատում ենք գնահատական դնելու համար և ուսուցումը խթանելու համար:

Գնահատում ենք սովորողի աշխատանքի արդյունքները և գործընթացը:

Գնահատում է՝ ուսուցիչը, սովորողը՝ ինքն իրեն:

Հանրակրթական դպրոցի սովորողների գնահատման հիմնական սկզբունքներն են.

Արդարությունը,

Հուսալիությունը,

Անկողմնակալությունը,

Հավաստիությունը,

Հիմնավորվածությունը,

Մատչելիությունը,

Թափանցիկությունը:

1. Դասի պլանավորում

Գործնական դասի կոնսպեկտ N

Դպրոց N 84

Դասարան՝ 9

Աշակերտների քանակը՝ 27, տղա՝ 16, աղջիկ՝ 11

Անցկացման վայրը՝ խաղահրապարակ

Դասի խնդիրները.

- 1) Ուսուցանել գնդակի վարում արգելքների (կոն, կանգնակ) շրջանցմամբ:
- 2) Ամրապնդել դիպուկության և հեռահար հարվածների կատարումը:

Անհրաժեշտ գույքը՝ գնդակներ, կոներ, կանգնակներ:

Դասի մասերը և տն.	Դասի բովանդակությունը	Զափավորում	Մեթոդական և կազմակերպչական ցուցումներ
1	2	3	4
Ներգրավիչ մաս՝ 10'	Շարում, հաշվարկ, գեկույց, դասի խնդիրների հախորդում	2'	ճակատային մեթոդ.
	Քայլք, արագ քայլք, դանդաղ վազք	2 շրջ.	Վազել հանգիստ, չշրջանցել ընկերոջ
	Վազք՝ ազդրերն առաջ բարձրացնելով	20 մ	Իրանի և ուսագոտու մկանները չլարել
	Վազք՝ սրունքները հետ գցելով	20 մ	

Վազբ` կից քայլերով	20 մ	
Դանդաղ վազբ, արագ քայլք, քայլք	1 շրջան	Կատարել շնչառական վարժություններ
Շարափոխում քառասյունի		
Ը.Չ.Վ.		
I. Ե.դ.` ձեռքերը կողմ.	6x	Ձեռքերը լավ տարածել կողմ, արմնկային հոդում չծալել
1. թափով արմունկները հետ,		
2. զսպանակել,		
3. թափով արմունկները հետ,		
4. Ե.դ.		
II. Ե.դ.` ձեռքերը կրծքին առաջ.	6x	Արմունկները չպահել ներքև, ձեռքերը լավ տարածել կողմ
1-2. զսպանակելով արմունկները հետ,		
3. ձեռքերը կողմ, ափերով վեր,		
4.Ե.դ.:		
III. Ե.դ.` կանգ ոտքերը զատած, ձեռքերը կողմ,	6x	Թեքումները կատարել խորը
1. թեքում աջ, ձեռքերը վեր,		
2. Ե.դ.,		
3. թեքում ձախ, ձեռքերը վեր,		
4. Ե.դ.:		
IV. Ե.դ.` կանգ, ոտքերը զատած, ձեռքերը գոտկատեղին,	6x	Թեքումների ժամանակ ոտքերը ճծալել ծնկան հոդում
1-2- թեքում առաջ արտակոր, ձեռքերը		

	կողմ,		
	3-4-Ե.դ.:		
	V. Ե.դ.՝ ձեռքները կողմ	6x	Հենման ոտքի ծունկը չծալել
	1-2. ծալել աջն առաջ, բռնել սրունքից, մոտեցնել կրծքին,		
	3-4. Ե.դ.:		
	VI. Ե.դ.՝ արտանկ աջով առաջ՝ ձեռքերով հենված աջ ազդրին	6x	Չսպանակումները կատարել խորը
	1-3-գսպանակել,		
	4-Ե.դ.,		
	5-8-նույնը՝ ձախով		
Հիմնական մաս՝ 30՝	1. Ուսուցանել գնդակի վարում արգելքների շրջանցումներով (աշակերտների կանգնեցնել 2 շարքով, յուրաքանչյուր շարքի առջև 10մ հեռավորության վրա դնել կոն)	15	Խմբակային մեթոդ
	ա.. Հրահանգով, 3մ հեռավորություն պահպանելով, արագ վազել, շրջանցել կոնը և վերադառնալ:	2x	Վազել որքան հնարավոր Էարագ, շնչառությունը չպահել
	բ. Նույնը կատարել գնդակի վարմամբ (յուրաքանչյուր շարքի առջև մեկը մյուսից 3մ հեռավորության վրա տեղադրվում է 4 կանգնակ)	2x	Գնդակը վարել ոտնաթաթի դրսի և ներսի կողմերով
	2. Ամրապնդել դիպուկության հեռահար հավաճների կատարումը	15'	Խմբակային մեթոդ

	Կանգնել 4 շաբօ՝ դարպասից 12-14մ հեռավորության վրա		Հարվածները կատարել աջ և ձախ ոտքերով
	Ոտնաթմբով, ատնաթմբի ներսի, դրսի մասերով կատարել հարվածները դարպասին		
	1. ստորին աջ և ձախ անկյունները,	4x	Ուշադիր նայել հարվածի ուղղությամբ, նոր՝ հարվածել
	2. վերին աջ և անկյունները,	4x	
	Աշակերտներին կանգնեցնել երկու շաբօվ դարպասից առավել հեռավորության վրա		
	1. Կատարել հեռահար հարվածներ աջ և ձախ ոտքերով, դարպասի ուղղությամբ	4x	
	2. Կատարել հեռահար հարված խաղընկերոջ ուղղությամբ	4x	
	Եզրափակիչ՝ մաս 5՝	Քայլք, դանդաղ վազք, քայլք հանգստացնող և մկանները թուլացնող վարժություններ	
1-2. ձեռքերը կողմերից վեր, խոր շնչել		6x	
3-4. ձեռքերը կողմերից ցած, արտաշնչել:			
Ե.դ.-հ.կ.		4x	արտակորվել խոր
1. արտակորվել ձեռքերը հետ			
2-3 ուղղվել, ձեռքերը ցած՝ ճոճելով առաջ և հետ,			
4.Ե.դ.:			
Դասի ամփոփում			

	Տնային հանձնարարություն		առավոտյան վազք
--	-------------------------	--	----------------

Եզրակացություն

Ուսումնասիրելով ֆուտբոլի տեխնիկական և տակտիկական ուսուցման մասին ֆուտբոլի ուսումնամեթոդական ձեռնարկը, հանրակրթական դպրոցի <<ֆիզիկական կուլտուրա>> առարկայի չափորոշիչը և ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի և ԿԳՄՍ նախարարության համատեղ մշակված <<Ֆուտբոլ>> ծրագիրը՝ գալիս ենք եզրակացության, որ ունենք բավականին լավ տեսական բազա, որի հմուտ կիրառումը խթանում է մարզաձևի արդյունավետության բարձրացմանը: Ինչպես տեսանք հետազոտության ժամանակ, ֆուտբոլի տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցումի իրականացվում է և տեսալսողական և գործնական կիրառման տարբերակներով: Տեսալսողական տարբերակում կիրառվում է տեսաֆիլմերի և ուսուցչի կողմից ցուցադրման եղանակներով: Գործնական տարբերակում տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների և մրցույթների ընթացքում: Տեսաֆիլմերի, ուսուցչի կողմից ցուցադրման, ինչպես նաև գործնական պարապմունքների ժամանակ տեխնիկական և տակտիկական կիրառման մեթոդները բավականին հաջող հնարավոր է լինում կատարել դպրոցի պայմաններում: Որոշակի ներդրողական մրցումներ նույնպես կազմակերպվում է դպրոցի պայմաններում, բայց տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցումը ավելի արդյունավետ դարձնելու համար բավականին մեծ խթան կհանդիսանա ֆուտբոլային մրցումների ավելի շատ կազմակերպումը: Վերջինս նաև հնարավորություն կընձեռի ի հայտ բերել լավագույն երեխաներին, որն էլ նպաստի Հայաստանում ֆուտբոլի զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սամսոն Սուրիկի Չակոբյան – ՖՈՒՏԲՈԼ ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2009
2. ՀՀ ԿԳ նախարարություն, Հյաստանի ֆուտբոլի ֆեդերացիա- Չակոբյան Ս.Ս.- <<ՖՈՒՏԲՈԼ>> ծրագիր, ԵՐԵՎԱՆ 2009
3. ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2012թ. N68 – Ա/Ք հրաման- ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ <<ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՍՈՒՐԱ>> ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ